Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զավարյան 57/4

20 հունվարի, 2023 թվական

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 20/01/2023-Լ

Ղեկավարվելով Ընկերության կանոնադրության 7.13 և 7.14 կետերով, Ընկերության և իր հաճախորդների/բաժանորդների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կարգավորման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Էլեկտրոնային համագործակցության պայմաններ»-ը՝ համաձայն հավելվածի:
2. «Էլեկտրոնային համագործակցության պայմաններ»-ը տեղադրել Ընկերության պաշտոնական կայքում (www.fnet.am):
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գլխավոր տնօրեն՝ **Գևորգ Ենգիբարյան**

«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ
«F NET» LLC
00868357

011 57 16 16
www.fnet.am
205002234198

ՀՎՀՀ՝ 00868357
Ինեկոբանկ ՓԲԸ՝ Հ/հ

Հավելված
Հաստատված է
«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ Տնօրենի
20.01.2023թ թիվ 20/01/2023-Լ հրամանով

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերությունը **(այսուհետ՝ նաև Օպերատոր)**, նպատակ ունենալով կարգավորել իր և հաճախորդների/բաժանորդների **(այսուհետ՝ նաև Բաժանորդ)** միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, հաստատում է սույն էլեկտրոնային համագործակցության պայմանները, որը հանդիսանում է Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված պայմանագրերի անբաժանելի մասը՝ դրանցում համապատասխան նշում լինելու դեպքում

1. Կողմերը պարտավորվում են միմյանց միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն իրականացնել սույն Պայմանների հիման վրա:
2. Օպերատորը Բաժանորդի հետ հաղորդակցվում է և հաղորդագրություններ է ուղարկում Բաժանորդի հետ համաձայնեցված եղանակով և հաղորդակցման տվյալներով, իսկ Բաժանորդի համար Բաժանորդների գրանցման համակարգում բացված անձնական էջի միջոցով ուղարկում է Կողմերի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի (**այսուհետ՝ Պայմանագիր**) հետ կապված փաստաթղթեր, նյութեր և պարագաներ:
3. Բաժանորդի կողմից միակողմանի նախաձեռնությամբ իր հաղորդակցման միջոցը փոփոխելու վերաբերյալ գրավոր դիմում Օպերատորին ներկայացնելու դեպքում, Օպերատորն հնարավորության դեպքում իրավունք ունի փոփոխված հաղորդակցման միջոցը կիրառել նաև Բաժանորդի գրավոր դիմումը ստանալուց մինչև 30-օրյա ժամկետը լրանալն իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Ընդ որում, հաղորդակցման միջոցի տարեկան մեկ անգամից ավելի փոփոխությունները կատարվում են Օպերատորի համաձայնությամբ:
4. Բաժանորդը համարվում է պատշաճ ծանուցված Պայմանների 2-րդ կետում նշված տեղեկատվությունը Բաժանորդի հետ համաձայնեցված եղանակով և հաղորդակցման տվյալներով Օպերատորի կողմից ուղարկելու պահից:
5. Բաժանորդի հաղորդակցման տվյալների փոփոխության դեպքում Բաժանորդն այդ մասին պետք է անհապաղ տեղեկացնի Օպերատորին: Հակառակ դեպքում Օպերատորը պատասխանատվություն չի կրում հաղորդակցման տվյալների փոփոխության հետևանքով Բաժանորդի կրած վնասների համար:
6. Բաժանորդը տեղեկացված է, որ էլեկտրոնային եղանակով ուղարկված ցանկացած հաղորդագրություն կարող է ներխուժման և միջամտության ենթարկվել երրորդ անձանց կողմից: Այդ կապակցությամբ Բաժանորդը հաստատում է, որ Օպերատորը որևէ պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կրած այն վնասների համար, որոնք կարող են առաջանալ վերը նշված պատճառներով տեղեկատվությունն ուշացումով ստանալու կամ այդ տեղեկատվությունը Օպերատորի կամքից անկախ պատճառներով կամ ոչ Օպերատորի մեղքով երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով:
7. Բաժանորդը պատասխանատու է Օպերատորի կրած բոլոր այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Պայմաններով սահմանված՝ Բաժանորդի պարտավորությունները վերջինիս կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով:
8. Օպերատորը և Բաժանորդը էլեկտրոնային հաղորդակցությունն իրականացնում են հետևյալ եղանակով

ա) Բաժանորդը, ստորագրելով Պայմանագիրը, Օպերատորին լիազորում է Բաժանորդի համար ստեղծել և տրամադրել մուտք դեպի պարզ էլեկտրոնային ստորագրություն:

բ) Օպերատորը Բաժանորդի հետ համաձայնեցված էլեկտրոնային եղանակով և էլեկտրոնային հաղորդակցման միջոցով Բաժանորդին է ուղարկում Բաժանորդների գրանցման համակարգի (**այսուհետ՝ նաև Համակարգ**) հղումը:

գ) Համակարգ մուտք գործելու համար Բաժանորդը պետք է լրացնի իրեն տրամադրված օգտանունը և գաղտնաբառը:

դ) Բաժանորդի կողմից կարող է փոփոխվել միայն գաղտնաբառը, բայց ոչ օգտանունը: Գաղտնաբառը համարվում է գաղտնի տեղեկատվություն, այդ թվում՝ Օպերատորի աշխատակիցների համար:

ե) Բաժանորդը պարտավոր է երրորդ անձանց հասանելի չդարձնել Համակարգի մուտքի հնարավորությունը: Բաժանորդն իրավունք չունի իր անձնական էջի օգտանունը և/կամ գաղտնաբառը տրամադրել կամ հայտնի դարձնել երրորդ անձանց: Օգտանվան և/կամ գաղտնաբառի այլ անձանց հայտնի դառնալու և/կամ կորստի մասին Բաժանորդը պարտավոր է անհապաղ հայտնել Օպերատորին: Ընդ որում, Բաժանորդը կրում է սույն կետով նշված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը և դրանից բխող իրավական հետևանքները: Օպերատորը որևէ պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կողմից իր պարտականությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում Բաժանորդի կրած վնասների համար:

զ) Մուտք գործելու համար տրամադրված օգտանունն ու գաղտնաբառը երրորդ անձանց հասանելի դառնալու, ինչպես նաև ցանկացած այլ կասկածելի և ռիսկային դեպքերի ժամանակ Բաժանորդը պարտավոր է անհապաղ տեղյակ պահել Օպերատորին, իսկ Օպերատորը պարտավոր է Բաժանորդի կողմից արգելափակման անհրաժեշտության մասին հայտնելուց անմիջապես հետո արգելափակել Բաժանորդի անձնական էջը:

է) Բաժանորդի կողմից Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև Օպերատորի մոտ Համակարգի ապօրինի օգտագործման կասկածի դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի համար արգելափակել Համակարգի հասանելիությունը

ը) Բաժանորդն իր անձնական էջին Օպերատորի ուղարկած փաստաթղթերին համաձայնություն է տալիս և փաստաթղթերը հաստատում/ստորագրում/վավերացնում է իր պարզ էլեկտրոնային սստորագրությամբ/հաստատումով, որը համարժեք է Բաժանորդի ինքնագիր ստորագրությանը և անհրաժեշտ և բավարար պայման է համապատասխան փաստաթուղթը պատշաճ վավերացված համարելու համար՝ առաջացնելով տվյալ փաստաթղթով սահմանված իրավունքները և պարտավորությունները: Բաժանորդի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված Պայմանագիրը առաջացնում է ինչպես տվյալ Պայմանագրի բովանդակությունից բխող, այնպես էլ տվյալ Պայմանագրում նշված հավելված(ներ)ի բովանդակությունից բխող իրավական հետևանքներ:

թ) Պարզ էլեկտրոնային ստորբագրության միջոցով ներկայացված Բաժանորդի դիմումները, հրահանգները և այլ գործողությունները գPործողություններ են, որոնք արտացոլում են Բաժանորդի համապատասխան իրական կամքը և ունեն լիարժեք ապացուցողական և իրավաբանական ուժ:

ժ) Բաժանորդը գիտակցում և ընդունում է, որ Պայմաններով նկարագրված էլեկտրոնային եղանակով ստորագրությունը հավասարազոր է և ունի նույն իրավաբանական ուժը, ինչ իր/իրավասու անձի ձեռագիր ստորագրությունը, իսկ վերջինիս կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրված էլեկտրոնային փաստաթղթերը առաջացնում են ինչպես տվյալ փաստաթղթի բովանդակությունից բխող, այնպես էլ տվյալ փաստաթղթում նշված հավելված(ներ)ի բովանդակությունից բխող իրավական հետևանքներ: